ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
Հեռ. 0231-6-57-60

«04» 09 2015թ.

N 127

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77$^1$-րդ հոդվածի առաջին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից օգոստոս ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները: Ընդունված որոշումներ չկան:

Առդիր՝ 4 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՓՈԽԱՐԻՆՈՂ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ. փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» օգոստոսի 2015 թվականի N 13

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8.3.7 կետի պահանջները՝ *կարգադրում եմ.*

1. 2015 թվականի օգոստոսի 20-ին Այգեկ գյուղական համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Ուժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով;
2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյանին:
3. Ուսումնավարժությանը ընդգրկել՝
1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքը,
2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի տարահանման մարմինների վարչակազմերը:
4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝
1) մինչև 2015 թվականի օգոստոսի 4-ը կազմել և գյուղապետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաթեթը,
2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը ուսումնավարժության ացկացմանը,
3) 2015 թվականի օգոստոսի 18-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահում եմ համայնքի ղեկավարին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի օգոստոսի 3
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Լենինյան փողոց 24
Էլ. փոստ gyux.aygek@mail.ru
հեռ. 0231-6 57 60

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«05» օգոստոսի 2015 թվականի N 14-Ա

### ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի օգոստոսի 3-ի N01/08.1/2776-15 գրությունը՝ *կարգադրում եմ*.

1. Ձևավորել անկախ հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ պարբերաբար ուսումնասիրություններ կատարել մանկապարտեզի կողմից սննդամթերքի ձեռքբերման գործընթացում, ապահովել, որ սննդամթերքի մատակարարման պայմանագրերի պատճենները փակցված լինեն մանկապարտեզի տեսանելի վայրում, իրականացնել շրջայցեր մանկապարտեզում՝ առանց նախապես տեղեկացնելու գյուղապետարանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի օգոստոսի 5

գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ գյուղական
համայնքի ղեկավարի
2015 թվականի օգոստոսի «05»-ի N14-Ա կարգադրության

# ԿԱԶՄ

## ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Հանձնաժողովի նախագահ՝ | Ավետիսյան Ալվարդ - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ) |
| 2. | Հանձնաժողովի անդամներ՝ | Սարգսյան Գայանե - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար |
| | | Սրապիոնյան Մարինետա - | Այգեկ գյուղական համայնքի բուժկետի բուժքույր |
| | | Մանուկյան Արթուր - | մանկապարտեզ հաճախող երեխայի ծնող |
| | | Գրիգորյան Դիանա - | մանկապարտեզ հաճախող երեխայի ծնող |
| | | Մկրտչյան Անի - | մանկապարտեզ հաճախող երեխայի ծնող |

Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղարին փոխարինող՝ Սուսաննա Թորոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyukaygek@mail.ru
Հեռ. 0231-6-97-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» օգոստոսի 2015 թվականի N 15-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի առաջին մասով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 162-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավար Վարուժան Աբրահամյանին համարել ամենամյա արձակուրդում 2015 թվականի օգոստոսի 14-ից մինչև 2015 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ:
2. Վարուժան Աբրահամյանին համարել աշխատանքի մեջ 2015 թվականի սեպտեմբերի 18-ից:
3. Համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի օգոստոսի 11
գ. Այգեկ